

ՀԱՅԿ. ՍՈՒ. ՊԵՏԱԿԱՆ ՀԵՇԱԿԻ. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒԹԵ

ՀԵՆՐԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

(Փիլիս. դիտ. գոկուր ուրով.)

ՏՐԱՄԱՐԱՆԱԿԱՆ ՄՏԱՆՈՂՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՆԵՐԸ

КНИГА ДОЛЖНА БЫТЬ
ВОЗВРАЩЕНА НЕ ПОЗДНЕ
УКАЗАННОГО ЗДЕСЬ СРОКА

Колич. пред. выдач _____ Зак. №

ՀԱՅԿ. ՍՍԴ. ՊԵՏԱԿԱՆ ՀԵՌԱԿԱԾ ՄԱՆԿԱՎԱՐՁԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

16

4-13

Զետագրի իրավունքով

ԱՏՎԱՐԴՎԱՆԻ Հ 1981 թ.

ՀԵՆՐԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

(Փիլիսոփա, պիտի, դահլանը սլրով.)

ՏՐԱՄԱՐԱՆԱԿԱՆ ՄՏԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ



ՀԵՌԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1947

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
1. Ընդեմուր բնուքագրաւմ	3
2. Նույնության օրենք	6
3. Հակասության օրենք	13
4. Երրորդի բացասման օրենք	22
5. Բավարար եիմքի օրենք	28
6. Եղրակացություն	24

A II
5324

ՏՐԱՄԱՐԱՆԱԿԱՆ ՄՏԱՇՈՂՈՒԹՅԱՆ ՕՐԵՆԳՆԵՐԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ

Ամեն մի դիտության մեջ հիմնականը զրա հաստատած օրենքներն են, որովհետև դիտությունը առնասարակ նյութի շարժման որևէ ձեր օրենքների սիստեմ է: Մաթեմատիկան, օրինակ՝ նյութի քանակական, քիմիան՝ որակական փոփոխությունների օրենքների սիստեմներ են և այլն: Այն հարցը, թե որչափով է տվյալ ուսմունքը գիտական, առաջի հերթին որոշվում է նրա սահմանած օրենքների ճշմարտացիությամբ, այն բանով, թե այդ օրենքները ինչ աստիճանի անխարդախ են վերաբաղրում իրերի օրեկտիվ կապակցություններն ու զարգացման ընթացքը: Աւտոմատական չէ, որ լոգիկայի մասին որոշ մարքսիստանեցի շրջանում եղած թյուր կարծիքը իր ձեռկերպումն է ստացել հենց զրա օրենքների հանդեպ բռնած բացասական դիրքով: Օրինակ, միանգամայն աեղին քննագատելով թերնշաբեյնի մետաֆիզիկ մտածելակերպը, Պինխանովը անարդարացիորեն «այս-այս և ոչ-ոչ» փորմուլան, այսինքն լոգիկայի երրորդի բացաման օրենքը նույնացնելով հակառակորդի «վերացական և կամ-կամ» փորմուլայի հետ, հայտարարում է հակառակիկտիկական հարցադրում: Բայց չէ որ ամեն մի օրենք շարժման որևէ ձեր օրենք է, ոչ թե սուբեկտիվ հնարամտության արդյունք, այլ արտաքին աշխարհի առարկաների ռեալ հարաբերությունների ընդհանրացումը: Կա արդյոք շարժման մետաֆիզիկ ձեւ կա զրա մետաֆիզիկ ըմբռունում, բայց մետաֆիզիկ շարժում չի եղել և չկա: Գիտության տվյալները վկայում են այն մասին, որ շարժման բոլոր ձևերն ել դիալեկտիկական պրոցեսներ են: Հետեւաբար, եթե գիտությունը շարժման որևէ ձեր մասին եղած ուսմունք է, ապա

այդ շարժման էական հատկանիշները վերաբարպող օրենքները
 մետափիզիկ լինել չեն կարող: Լոգիկան նյութի ստատիկ վիճա-
 կի օրենքների սիստեմ է: Էնգելսը այն համեմատում է էլե-
 մենտար մաթեմատիկայի հետ, որը «կայուն մեծությունների»
 մասին եղած զիտություն է: Ոչ մի հիմք չկա ասելու, թե ստա-
 տիկան դիալեկտիկայից դուրս է: Լինելով լնողանրապես շարժ-
 ման ձևերից մեկը, ստատիկան, կամ նյութի «կայուն մեծու-
 թյունների» վիճակը չի հակադրվում դիալեկտիկային: Զէ որ
 հանգիստը շարժման մի մոմենտն է, մտնում է զրա մեջ ու չի
 քաժանվում զրանից: Անկասկած դիալեկտիկայի համեմատու-
 թյամբ լոգիկայի դրածունեության շառավիղը փոքր է, դա «վերց-
 նում է առարկաների կամ երևությունների... ձևական ընորոշում-
 ները, գեկավարվելով նրանով, որն ավելի սովորական է կամ
 որն ավելի հաճախ է տէքի լնունում, ու սահմանափակվում է զրա-
 նով»*: Բայց այդ հանգամանքը արամարանությունը մետա-
 ֆիզիկական չի դարձնում, որովհետեւ ամենալարդ, հասարակ
 դատողությունների մեջն անդամ՝ «Եվանը մարդ է, ժուչկան՝
 շուն... դիալեկտիկա կա»**: Բանն այն է, որ այդ հասարակ դա-
 տողությունները՝ մտածողության ամենաէլեմենտար ձևերն ու
 օրենքները, մարդկային հազարավոր սերունդների կուտակած
 փորձի արդյունք են: Առանց այդ օրենքների, առավել ես հա-
 կառակ դրանց գիտական ճանաչողությունն անհնար րան է:
 Զի որ բարդ պրոցեսները պարզերի բարդացումն են, զրանց ո-
 րակական փոփոխությունները: Որպեսզի առաջիններն ըմբռա-
 նենք, մենք չենք կարող ու չսկիտք է ի բոչենք վերջինների վրայից:
 Բարդ պրոցեսները մեղ արվում են դիալեկտիկայի միջոցով,
 որը մտքի բարձրագույն մաթեմատիկան է: Սակայն այդ բա-
 նին հասնելու համար մենք պետք է գիտենանք էլեմենտար
 մաթեմատիկան, մեղ պետք է ծանոթ լինեն «կայուն մեծու-
 թյունների» զոյության օրենքներն ու օրինաչափությունները:
 «Կայուն մեծություններ» արտաքին աշխարհի զոյության
 պարզ ձևերն են, դրանց վերաբարպությունը մեր գիտակցու-
 թյան մեջ՝ մտածողության պարզ օրենքները: Ասել թե այդ

* Լենին, հատ. 26, էջ 134:

** Լենին, հատ. 13, էջ 302:

օքենքները մասնակի բնույթի ունեն, սկսալ է, որովհետեւ թե՛
հանգիստը շարժման մի մոմենտն է միայն, բայց և այնպես
պատահական չէ և շարժումն առանց այդ կարգի մոմենտների
տեղի չունի: Ստատիկան ուժերի հավասարակշռում է, դինա-
միկան այդ հավասարակշռության անընդհատ խախտումը՝ Մատ-
արկան անհրաժեշտորեն հանգեցնում է զինամիկայի, ինչպես
և ընդհակառակը Դրանց հարաբերությունը դիալիկաթիկական
միտություն է: Առաջի նյութի այդ վիճակների ճանաչման
օքենքներից ոչ մեկն էլ մասնակի-պատահական լինել չի կարող:

Ամեն մի պրոցես, շարժման ամեն մի ձև ունի հարաբե-
րականորեն կայուն գրաւթյուններ, դադարի մոմենտներ: Մար-
դը իր ծննդյան օրից մինչև մասն անընդհատ փոխվում է,
բայց չի դադարում մարդ լինելուց, քարը անձրկից, քամուց և
արկից քայլայվում է, բայց մինչև վերջի փշտանքը շարունա-
կում է մեալ քարը Այս նշանակում է, որ շարժվող նյութի պայ-
մանական հանգիստը ընդհանրական է, հանդես է գալիս շարժ-
ման ամեն մի ձևում, հետևաբար զրա գոյության, ինչպես
նաև ճամաչչություն ձևերն ու օրինաքնները նույնպես ընդհան-
րական են: Անկառած, հանդասի մամենառը նյութի որակական
փոխման ժամանակ, առենք, օրինակ, քիմիայում հանդես չի
գալիս տյապես, ինչպես զրա քանակութան փոփոխման ժամա-
նակ, օրինակ մաթեմատիկայում: Այդ զանազանությունների
ու զրանց հետ կապված որակական զանազան օրինաչափություն-
ների հստատումն ու հետպատությունը առանձին՝ քիմիայի,
մաթեմատիկայի և ուրիշ գիտությունների դործն է: Բայց այդ
բոլոր տարբերությունները ընդհանրանում են դադարի մեջ,
որպես շարժման մի մոմենտի տաճարակ ու սրա օրենքները
ընդհանրական նշանակություն են ստանում զառնալով մի ա-
ռանձին դիտության՝ լոգիկայի ուսումնասիրության առարկա:

Լոգիկայի օրենքներն ամեն մի գիտական ձանաշողու-
թյան տարրական օրենքներն են, այն սկզբանական քայլերը, ա-
ռանց որոնց գիտական մտածողությունն ընդհանրապես անհնար-
բան է: Ամեն մի գիտական մտածողության առաջի հիմնական
պայմանը հետևողականությունն է, գատողաւթյունների տրամա-
բանական այնպիսի կտոր, երբ մեկն անհրաժեշտորեն ըխում է
մյուսից, հանգիստանում է զրա հիմնավորումը, կամ հետագա
դարգացումն ու պարզաբանումը: Այս էր իտալական «Ճախ»
կոմունիստների Բորգիկայի և մյուսների հիմնական սխալը

1920 թ. Այն, որ նրանք ճիշտ քննադատուելով Տուրատիի և
կողմանկիցների օպորտունիզմը «բանվորական կարգի ու դիս-
ցիպլինալի» մասին, միանդամայն անհիմն եղբակացություն
արին, թե «առանասարակ պառլամենտին մասնակցելը վճասա-
կար է»: Լենինն այս կարգի հարցադրումն անվանում է «Ճիշտ
նախազրյալներից սխալ եղբակացություն»*: Եվ իսկապես եթե
Տուրատին օգտագործելով լիզալ հնարավորություններն աշխա-
տում էր կասեցնել բանվորական սեղուցքիայի խորացումը
իտալիայում, ապա դրանից հետում էր, որ անհրաժեշտ էր
իլել Տուրատից այդ գենքը, ուղղել այն Տուրատիի ու նրա
պաշտպանյալների գեմ, այսինքն՝ պառլամենտական տղթատանք-
ներին ակտիվ մասնակցություն ունենալը Բորդիզայի ու նրա
«ձախ» բարեկամների տրամաբանական սխալն այն էր, որ նը-
րանք իրենց մտածողության նախադրյալների ու եղբակացու-
թյան միջև օրգանական կապ ստեղծելու մասին ոչ միայն հոգ-
չին տանում, այլև գործում էին ճիշտ հակառակը: Լոգիկան
նման երեսըթներ հանդուրժել չի կարող, նա ուսուցանում է
մեզ լինել հետեղովական, մտքերի հակադրություններից զերծ
մնալ, գործ ունենալ կայսեն, մեկընդիշաւ որոշ հասկացություն-
ների հետ: Հենց այդ նպատակն են հետապնդում լոգիկայի
օբյենքները:

2. ՆՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ

Լոգիկայի առաջի օրինքը կոչվում է նույնության օրինք:
ըստ որի մտահանգման ամբողջ ընթացքում մեր գործածած
ամեն մի տերմին, մինչև այլյալ պրոցեսի ավարտումը, պետք է
պահպանի սկզբում իրեն վերագրվող բովանդակությունը, այ-
սինքն իմաստը: Եթե մենք ասում ենք,—կոմունիզմի սկզբունքը
պրոլետարական դիկտատուրայի հաստատումն է և անցման
ըջանում պետական հարկադրանքի իրականացումը, մեզ մոտ
պըոլետարական դիկտատուրա է, ապա դրանից հետում է, որ
մեզ մոտ իրականացվում է կոմունիզմի սկզբունքը: Այս մտա-
հանգման առաջի երկու դատողությունները բավարար հիմք են

* Լենին, հ. 25, էջ 245:

վերջի դատողության՝ եզրակացության համար։ Բայց երբ
 Կառուցլին ասում է, թե բոլշևիկների և մենշևիկների* միջև
 հակասություն կա, հակասության օքեկտը ողեմոկրատական ու
 գիկատաստրական մեթոդների» ըմբռնումն է, ուրեմն բոլշևիկներ-
 ը դեմ են գեմոկրատիային, նա դնում է մարքսիզմի, ուստի
 և տրամաբանական հետեղական մտածողության դեմ։ Ամենից
 առաջ Կառուցլին երկրորդ նախագրյալը սխալ է վերցնում։ Պրո-
 ֆետարական գիկատաստրայի հարցը դեմոկրատական կամ ոչ
 գեմոկրատական մեթոդի հարց չէ, այլ «պրոլետարական պետու-
 թյան բուրժուական պետության, պրոլետարական գեմոկրատիա-
 յի բուրժուական գեմոկրատիայի հանդեպ ունեցած հարաբե-
 րության հարց է» (ն. ա., էջ 337)։ Ուստի բոլշևիկները ոչ թե
 ընդհանրապես գեմոկրատիային են դեմ, այլ բուրժուական
 «գեմոկրատիային», այն «գեմոկրատիային», որը բուրժուագիտ-
 յի պրոլետարիատի նկատմամբ գործադրած անասելի բոնու-
 թյունների, նրա անսանձ գերիշանության իրականացումը
 քողարկելու միջոց է հանդիսանում։ Կառուցկու առաջի և երկ-
 րորդ նախագրյալներն իրար հետ չեն կապվում, երկրորդը, բա-
 ցի նրանից, որ ըստ էության սխալ է, նաև առաջինի կոնկրե-
 տացումը չէ, ուստի գրանց բռնազրություններից
 ճիշտ եզրակացություն ստացվել չէր կարող։

Եթե նույնության օբնքը պահանջում է, որ մտածողու-
 թյան սկզբում հանդես եկող հասկացությունը մինչև տվյալ
 պրոցեսի ավարտումը նույնը մնա, ապա կառուցկին մեղանչում
 է այդ օրենքի դեմ։ Նա իր աշխատությունը վերնագրում է
 «Պրոլետարական գիկատառարա», ուրեմն պետք է խոսի բոլշևիկ-
 ների և մենշևիկների այդ խնդրի շուրջ ունեցած հակառակ ըմբռ-
 նումների մասին, բայց զրա փոխարեն նա եզրակացնում է,
 որպես թե առաջիններն առհասարակ գեմոկրատիայի հակառա-
 կորդներ են։ Անշուշտ, կառուցկու այս տրամաբանական հակա-
 տությունները նրա քաղաքական-վիլխոսիայական հակամարը
 պիտական համոզումների արգասիք են։ Եվ դա հենց նշան է

* Նա ասում է «ոչ բոլշևիկների», որը լենինն արդարացիորեն համա-
 րում է բուրժ. հանդեպ պրոլետարիատի վարած կովում մենշևիկների զբակած
 ժրական տեղի հակամարքսիստական որոշում—է, էջ 337։

այն բանի, որ գիտական տրամաբանությունը հնարավոր է մարդու լինինայն աշխարհայացողության հետևողա կան կիրառման գեղգում միայն, որ գիտական տրամաբանության օրենքները ոչ թե դիալեկտիկայի բացասումն են, այլ զրա հաստատումն ու հիմնավորումը:

Դիալեկտիկայի հիմնական պայմանը հայտնաբերվոծ օրենքի ռեալականությունն է, որ դա լինի բնության օրեկտիվ օրենքը: Նույնության օրենքը հենց այդպիսին է. դա ոչ թե սուրբեկտիվ մտահղացման արգյունք է, այլ նյութական աշխարհի որոշ՝ ստատիկի վիճակի վերաբարությունը մեր գիտակցության մեջ: Ցիտերով Հեգելին, Լենինը զբում է՝ «Էությունը... պարզ նույնություն է իր հետա»: Մենք չենք կարող նույնությունը բնությունից դուրս նետել, դա նրա օրենքն է: Քարը քար է, ծառը՝ ծառ, լեռը՝ լեռ ոչ թե մեր մտքում, համաձայն մեր մտածողության օրենքների, այլ իրականության մեջ ու մեղանից բոլորովին անկախ Բնության զարգացումը, զրա գիտական ճանաչողությունը նույնությունը չի բացասում, բնդիակառակը՝ «գիտելիքան կան մասին, թե ինչպես հակասությունները կարող են, լինում են (դառնում են) նույնը,—ինչ պայմաններում զբանք վերածվելով մեկը մյուսի նույնն են լինում...» (ն. տ., էջ 109), ասում է Լենինը:

Նույնությունը գիտական ճանաչողության օրենք է, զար է, որ հնարավորություն է տալիս մեկ ճշտել մեր մտքերը, հիմնավորապես սահմանել մեր հասկացությունները ու խստությամբ պահպանել դրանց հետևողականությունը: «...Հնարավոր շփոթություններից խուսափելու համար մենք սկետք է նախապես սահմանենք այն հասկացությունները, որոնք մենք գործ ենք ածում», ասում է ընկեր Ստալինը: Ի՞նչ է նշանակում մասնակցել «խորհրդակցությանը»: Ի՞նչ է նշանակում բոյկոտել «խորհրդակցությունը»*: Ահա այս հասկացությունները պետք է, որ իրենց որոշակի սահմանումն ստանան, որպեսզի մենք կարողանանք ասել՝ անհրաժեշտ է, թե անհրաժեշտ չէ մասնակցել նավթարդյունաբերողների խորհրդակցությանը: Այսպիսով

* Լենին, Փիլ. տեսք, էջ 132,

** Ստալին, հասոք 2, էջ 81.

նույնության օրենքը նաև առօրյա պրակտիկ գործածության օրենք է:

Ամեն քայլափոխին, մեր ճանաչողական գործունեության բոլոր աստիճաններում էլ մենք գործ ունենք սահմանման, ուստի և նույնության օրենքի հետ Բայց սահմանել միաժամանակ նշանակում է մի հասկացություն, կամ դրա վերաբառադրած օբեկտը սահմանագծել մեկ ուրիշ հասկացությունից ու դրա մեջ հանդիս եկալ առարկայից: Սահմանել ասում է կենինը, նշանակում է մի որևէ փոքր հասկացություն դնել իրենից մեծ մի հասկացության տակ: Օրինակ՝ վարդը ծաղկի է: Սա մի սահմանում է, որով մենք վարդը առանձնացնելով ուրիշ տեսակի բույսերից նույնացրինք ծաղկի հետ: Այս, կարծեք թե շատ սովորական համարվող զործողությունը իրականության մեջ չափազանց կարևոր ճանաչողական ակա է: Հասկացությունների որոշակիություն ու կայունություն, ահա գիտական մտածողության տառաջի պայմանը, որը ձեռք է բերվում հենց նույնության օրենքի հետևողական կիբառման դեպքում միայն: Էնկեր Ստալինն ասում է, թե «մեր մենշեկին այս դեպքում ևս նույն տառանումն ու վախկուտությունն է ցուցաբերում լողիկայի առաջ, ինչ որ առաջ—այսինքն նա գիտակցաբար շփոթում է «սոցիալիստական գիտակցությունը սոցիալիստական հակման» հետ*, որպեսզի հիմք ունենա բացասելու, թե առաջինը բանվարդասակարգի մեջ մտցվում է դրսից:

Հասկացությունների շփոթը օպորտունիսաների հիմնական գիծն է և օպորտունիզմի քողարկման լավագույն միջոցը: Որպեսզի կարողանալին 1905 թ. ունուցիայի հարցում բռնած իրենց գավաճանական գիծն արդարացնել, այսինքն ժխտել պրոլետարիատի հեգեմոն դերը և ժամանակավոր կառավարության նրա ունենալիք մասնակցությունը, մենշեկիները ստեղծեցին հասկացությունների մի ամբողջ քառո՛ դեմոկրատական ռեկուցիան խառնեցին սոցիալիստականի, մանր-բուրժուական «սոցիալիստ» կուի Բլանին համեմատեցին սոցիալ-դեմոկրատների հետ, իշխանության գրավմանն ու կառավարության մասնակցելու հարցերը նույնացրին, այլ կերպ ասած ուստատակ տ-

* Ստալին, հ. 1, էջ 165—6.

քին լոգիկայի առաջի օրենքից ըստով էլեմենտար պահանջները, հասկացությունների պարզ սահմանադրումն ու որոշակիությունը: Վերհանելով մենշևկների այդ հակառամարանական արարքը, ընկեր Ստալինը հարցնում է «...ինչպես զուք չեք հասկանում, որ հարցեր շփոթելը չի նշանակում լուծել այդպիսիք» (էջ 146): Մի հարց լուծելու համար ամենից առաջ պահանջվում է գրա պարզ պատկերացում, հետեւղականություն, հատուկ գիտակցություն այն մասին, որ չի կարելի սկսել մի բանով, վերջացնել մեկ ուրիշով, ցանկանալ մի բան, բայց խոսել մեկ ուրիշ բանի մասին: Դա արտաքանական աղիտություն է, որը հանդիս է գոլիս հենց այն ժամանակ, երբ մարդիկ սիալ ճանապարհի վրա են կտնվնած, երբ նրանց հարկավոր է իրենց գալաճանական դործողությունները թաղցներ: Օրինակ ձեզ «Ելվա» թիրթի մենշևկի թղթակիցը: Հայտնի է, որ 1906 թ. Բ. Ա. Դ. Բ. Կ. «Աղջարային» ծրագրի սկզբունքը՝ ճորտափիրության մնացորդների ոչնչացումն ու դաստիարակային սպաքարի աղատ զարգացումը, անփոփոխ եր մնացել փոխվել էին միայն այդ սկզբունքն իրականացնող միջոցները: Ուրեմն խոսք կարող էր լինել այդ միջոցների մասին, թե զրանցից որն է լավը, որն է ավելի արմատական ու բանվոր դաստիարակի դաստիարակային կովի տվյալ աստիճանին համապատասխան: Մենշևկի թղթակիցը հակառակ դրան «...անսպասելիորեն ցատկեց սկզբունքների բնագավառը, պրակտիկ հարցերը ներկայացրեց որպես սկզբունքային ...սկզբունքն ու դրա իրացման միջոցները շփոթեց իրար հետ և այդ ձեռվ ակամայից անցավ պարտիայի առաջադրած հարցի կողքով» (էջ 231), ասում է ընկեր Ստալինը: Կարելի՞ է արդյոք քաղաքական որիէ հարց լուծել կամ գիտություն առաջ առաջ առանել հետեւկով նման մտածելակերպին, խախտելով արամարանական մտածողության օրենքը: Անշուշտ, ոչ:

Գիտությունն առաջին հերթին հետեւղական մտածողություն է պահանջում, նա կտրականութես մերժում է միենույն պրոցեսում հանդիս եկող հասկացությունների, կամ զրանց իմաստների փոխփում, նա բծախնդրության աստիճանի ճշտություն է պահանջում, տերմինների օգտագործման ու զրանց կապակցման ձեռքի մեջ պարզություն ու կայունություն,

որը նշանակում է, թե տրամաբանական մտածողության
նույնության օրենքի հետևողական կիրառում:

Նույնության օրենքը անիմաստ կրկնարանություն չէ:
Սիալ է, երբ Ա=Ա-ի ֆորմուլայի մեջ մտքի քարացում են
տեսնում կայունությունը քարացում չէ, ինչպես հարաբերակա-
նորեն հանդիսատ վիճակը շարժման բացառումը չէ: Արտաքին
աշխարհը պրոցենսերի ամբողջություն է, երբ գրանցից յուրա-
քանչյուրը մյուսի հետ սերտորեն կապված լինելով, կամ դրա-
շարունակությունը հանդիսանալով, միաժամանակ մը ինքնու-
րույնություն է, հարաբերականորեն մի ավարտուն ամբողջու-
թյուն: Ա=Ա-ի ֆորմուլան ահա այդ ավարտուն վիճակների
վիրարարացնությունն է մեր զիտակցության մեջ, աստիճ որի
ոչ մի օրինաչափություն հաստատել հնարավոր չէ: Ինչպես
Ֆիզիկոսը կկարողանա էներգիայի ձևերի փոխանցման օբյենքը
սահմաներ եթե նա հաստատ հաջատացած չէ, որ ասենք, օրի-
նակ, միտանիկական ու ջերմային էներգիաները տարրեր
բաներ են, յուրաքանչյուրը գրանցից հավասար է ինքն իրեն
ու որոշ պայմաններում միայն կարող է իր հակագրությանը
վերածվել կամ երբ տնտեսագետն ասում է, թե կապիտալիզմը
մասնավոր սեփականատիրական այն անտեսածեն է, որտեղ հա-
մելյալ արժեքի տրտագրությունը նոպատակ է, դրանով նա չի
ժիստում կապիտալիզմի կազմը մյուս ֆորմացիաների հետ և
այն, որ կապիտալիզմի զարգացումը անխուսափելիորեն հան-
դեցնում է սոցիալիզմին, ոչ, նա հաստատում է փաստը, առանց
որիս հիշյալ կառակցություններն ու հանգեցումն ուսումնասիրել
հնարավոր չէ: Նույնության օրենքը ուրիշ նպատակ չի
հետապնդում, քան թե հաստատել որ մեզ տրվոծ իրը,
առարկան, կամ երկույթը հենց այն է, ինչի մասին որ
խոսվում է, կամ ինչը որ մենք ցանկանում ենք ունենալ: Բայց
միթև դա մակերեսային ճոնաչողություն չէ: Հին ձևական տրա-
մարանության տեսակետից ու գրա շրջանակներում՝ անպայման
այսու Բայց ձևական արամաբանությունը նույնության օ-
րենքը աղքատել է, իսկաքիչ յուրել:

Երական նույնությունը համընկնում է էության հետ, կամ;
ինչպես զեգելն է ասում, «էությունը... ինքն իրա հետ հասա-
րակ նույնություն է»: Այսպիսի նույնության հանաչողությունը

հենց՝ մակերեսայինի հաղթահարումն է և «էռության հանաչողություն»*: Զեական մտածողության համար $A = A$ -ի բանաձևը, միջոց էր ժխտելու ամեն մի տարբերություն, ապացուցելու, որ բոլոր պայմաններումն էլ զանազանությունը հետևողական մտածողության արգելք է հանդիսանում: Զեական տրամաբանությունը կանգնեց նույնության օրենքի միակողմանի բացարձականացման տեսակետի վրա, որի հետևանքով էլ այն վերածվեց մետաֆիզիկ ֆորմուլայի՝ ուղղված ամեն մի ուսուցիչն մաքի գեմ: Բայց վերսում հիշատակած իմաստով նույնության օրենքը օրեկտիվ աշխարհի, ուստի և մտածողության: Հիմնական օրենք է: Ֆորմալիստների սխալը հենց այն է, որ նրանք կարծել են, թե նույնությունը զուտ արտաքին հայեցում է, եթե մենք վերանում ենք եղած տարբերություններից և էռության տարբերի միջև արտարակու նույնությունն ենք հաստատում: Բայց դա սխալ է: Նույնությունը էական է, ոչ թե մակերեսային արտարահման արդյունք, այլ օրեկտիվ հիմնական հատկանիշը, զրա էռությունը: Էռությունը, օրինակ կապիտալի էռությունը, դրա իսկ տարբեր էլեմենտների պարզ ամբողջությունը չէ, այլ այն, ինչ որ հիշյալ էլեմենտների պայմանավորուն է հանդիսանում: Մեր օրինակի մեջ այլպեսի էռություն արժեքն է: Արժեքը, որպես կապիտալի էռությունն է ոչ թե դրա որոշիչը, ոչ ուժելքսիսն է և ոչ թե դրա վերացական մոմենտը (Եջ 19): Այսպիսի նույնություն զանազանազարկ չէ, այլ կոնկրետ նույնությունն է և հակազրվում է հարցի մետաֆիզիկ պատկերացմանը վերջինների այն տեսակետը, թե $A = A$ -ի բանաձևը զիալեկտիկական պրոցեսի խսպան ժիտումն է, անհիմն է, որովհետև $A = A$ -ի միմիայն պրոցեսի միշ, կապիտալիզմը կապիտալիզմ է միայն ոչ կապիտալիզմի՝ մյուս ֆորմացիաների՝ կապակցությամբ, այսինքն որպես դրանց որակական հակազրություն: Այս նշանակումն է, որ մերժելով հին մետափիզիկական հարցադրությունը, մարքսիստները նույնության օրենքը հակաղիալեկտիկական չեն համարում, կամ շարժման բացասում, այլ կոնկրետ ուստի և շարժուն նույնություն:

Լոգիկայի մեջ նույնության օրենքը հաստատում է միայն մի բան, թե իրը կամ երևույթը ավյալ ժամանակաշրջանում

* Гегель, Наука логики, II, Еջ 18.

Հավաստը է ինքն իրեն, նա ոչինչ չի ասում այն մասին, թե
այդ նույն օրեկտը չի կարող միաժամանակ ուրիշը լինել այլ
կերպ ասած, նա չի ասում, թե ինչպես վարվել երբ մեզ տրված
մի երկու հակառիք վիճակները: Այդ հարցի պատասխանը տալիս
է լոգիկայի երկրորդ՝ հակասության օրենքը, շարունակելով
զարգացնել նույնության օրենքի առաջազրած թեզի հիմնավո-
րումը:

ՅԱԿԱՍՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ

Այս օրենքի համաձայն երկու տրամադրեն հակադիր
աղնգումները միաժամանակ ճշմարիտ լինել չեն կարող: Ա չի
կարող միաժամանակ և Յ լինել և ոչ Յ: Երբ բանաստեղծն
ասում է, թե «վերջին անգամ ողին հայտնվեց», դիմելով իր
իսկ ստեղծած արարածին «Դու՝ ասաց մարդուն, վշտին հաղթե-
ցիր, ժառանգիր տհա տիեղերքն իմ մեծ», ապա նա չպետք է
նույն ուրած միջոցով գիմելով նույն մարդուն ասեր՝ «Թող վիշտն
ու խիսդիք անըածան լինեն ինչպես կակաչի կարմիրն ու սկը»*: Եթե
մարդը վշտին հաղթեց, ասլա զա խինդից կակաչի սկի
նման անըածան լինել չի կարող քանի որ մի բան հաղթել,
մերջ տալ մի բանի, առավել ևս զբա հավերժացումը չէ: Այս-
անդ հակասություն կա, երկու տրամադրեն հակադիր հարցա-
գրումները միաժամանակ հայտարարվում են ճշմարիտ: Իհարկե,
կարող են ասել, թե զա բանաստեղծական պատկեր է: Բայց մի-
թե ովատկերը ճանաչողության միջոց չէ: Պարզ է, որ այս գեղա-
քում մենք ունենք տրամաբանական մտածողության օրենքի
խախտում, որը չպետք է անի ոչ միայն գիտնականը, այլի բա-
նաստեղծը:

Հակասության օրենքը մտածողության ամենահիմնական օրենք-
ներից մեկն է: Դեռ Արիստոտելն ասել է, թե «անհնար է, որ
միհնությունը միաժամանակ միհնույն բանին և միհնույն իմաս-
տով թե հատուկ լինի ու թե ոչ»: Անշուշտ, Արիստոտելն իր
այդ թեղը ուղղել է Հերակլիտի գեմ, որովհետև բացստրելով
վերահշյալ հարցադրման իմաստը, նա զրում է՝ «իսկապես որ,

* Հ. Շիրազ, Լիբեկ, 1916 թ., էջ 94—5:

ով էլ որ մինի չի կարող ընդունել, որ միևնույնը (և) կա և չկարինչպես այդ որոշ մարդկանց կարծիքով, անդում է Հերակլիտը*: Ըստ Հերակլիտի ամեն բան հոսում է ու փոխվում, հավերժ անշարժ ոչինչ չկա: Այդ տեսակետն այսօր գիտության տեսակետն է, մարդկան փիլիսոփայության հիմնական թեղերից մեկը: Բայց արդյո՞ք զրանից հետևում է, թե միևնույն առարկայի կամ երևոյթի մասին, միևնույն ժամանակամիջոցում և միևնույն հարաբերությունների մեջ վերցրած ոչինչ որոշակի ասել չի կարելի: Հենց նույն Հերակլիտը, որի շարժման սկզբունքից Սրբառութելը եկրակացնում է, որպես թե դա ընդհանրապես օրեկտիվ սահմանման հնարավորության բացասումն է, զրում է, որ «աշխարհը բռլորից միասնական է, աստվածներից ու մարդկանցից ոչ մեկի կողմից չի ստեղծվել, այլ եղել է, կա ու պիտի լինի հավերժ կենդանի, օրինաչափորեն բռնկվող և օրինաչափորեն հանդչող կրակ»: Այլ կերպ ասած, Հերակլիտը վարվում է հենց լոգիկայի օրհնքի համաձայն, նա աշխարհին միտմամանեկ ու միևնույն հարաբերությունների մեջ մեկը մյուսին ժխտող հատկանիշներ չի վերագրում, նա չի տառամ, թե դա և կա և չկա, և ստեղծված է և չի ստեղծված: Աշխարհը կա, աշխարհը չի ստեղծված: Անա Հերակլիտի տեսակետը: Բայց եղածը փոխվում է: Փոփոխվող ամեն մի վիճակ կա, չեղածը չի փոխվում, փոխվում է եղածը: Փոփոխման հետևանքով սաացվածը նորից կա, սակայն որպես հնի բացասումը: Ուստի Հերակլիտը ոչ թե եղելությունն է ժխտում, այլ զրա անշարժությունը և այն, որ միևնույն երևոյթը բռլոր ժամանակներում ու հարաբերությունների մեջ միշտ էլ հավասար է ինքն իրեն: Հենց այդ ամենն ի նկատի ունենալով կենինը Հերակլիտի վերոհիշյալ ֆրազմենտի մասին նկատում է՝ «Դիալեկտիկական մատերիալիզմի սկզբունքների շատ լավ շարադրում»*:

Դիալեկտիկական մատերիալիզմը այն տեսակետն է, թե ոչինչ անշարժ չկա: Բայց զրանից բնավլ չի հետևում, թե դա հարաբերականորեն կայուն վիճակներ չի ընդունում, կամ կարող է համաձայնվել այն հարցադրման հետ, ըստ որի միևնույն

* Մետաֆիլիկա, գիրք 4, գլուխ 8, էջ 63, Մոսկվա-Լենինգրադ, 1934 թ.
* Փլ. տհոր. էջ 818.

առարկան, միևնույն ժամանակաշրջացքում ու միևնույն հաշը բերությունների մեջ միանգամայն այլ է, մեկ ուրիշ առարկա: Արվեստի մենք առարկայի փոփոխման մասին դադափար ունինանք, պետք է այն վերցնենք մի ուրիշ հարաբերության մեջ, որովհետև միաժամանակ հենց այդ նոր հարաբերություններն են, որ հնարավորություն են տալիս մեղ առարկայի մեջ նոր հատկություններ տեսնել, ուստի և նոր օբյեկտաչափություններ: Օրինակ, երբ ես ասում եմ, թե Սոկրատը հույն է, մտանանիշ եմ անում նրա ազգային հատկանիշի վրա, վերցնում եմ նրան որոշ կարգի հարաբերությունների՝ մեջ, բայց երբ փոփելով իմ այդ սահմանումն ասում եմ, թե նա մարդ է, կամ կենդանի, այս անգամ արդեն հատկանիշներն ել, հաստատած հարաբերություններն ու օրինաչափություններն ել դառնում են այլ Ռւստի դիմականութիւնները մեկը մյուսին չեն հակադրվում և իջուր չեն, որ կենինը դրանց միջև հավասարության նշան է դնում:

Կարող են ասել, թե կենինի առածը դիմականի հական լոգիկային է վերաբերում: Բայց միթե գիտությունը, որը շարժման որևէ ձևի օրենքների սիստեմ է, կարող է ինքնին մետաֆիզիկ լինել: Հնարավոր է և կա այդ օրենքների մետաֆիզիկ ըմբռունում: Բուրժուական պաշտոնական գիտությունը հենց այլպիսին է: Սակայն դրանից իրենք՝ օրենքները մետաֆիզիկ չեն դառնում, եթե իսկապես դրանք երկույթների բուն էություններ են, այն մայունը, անփոփոխ, որը հատուկ է դրանց:

Հակասության օրենքը հենց օրեկտիվ օրենքն է: Ոչ թե մեր բանականության, այլ իրականության մեջ միենույն ծաղկեփունջը միաժամանակ և վարդերից և ոչ վարդերից, միենաւյն գետը միաժամանակ և թեմզա և ոչ թեմզա լինել չեն կարող: Միաժամանակ, Սա չափազանց կարեոր է, որովհետև շարժման անհրաժեշտ ձև հանդիսացող հարաբերականորեն հանդիսա մոռանեալ հենց այդ ժամանակի հետ է կապված, ժամանակն անցավ, փոխվում են նաև հարաբերությունները, ստեղծվում են նոր պայմաններ, որոնց առկայությամբ նախկին բնորոշումն արդեն ճիշտ չեն: Երբ ես ասում եմ, թե կենինը 1914 թվին անգլերեն գիտեր և հակառակ պնդումը սխալ է, փաստը վերցնում

հմ իր կոնկրետ վիճակում, որը դիալեկտիկայի ոչ թե բացառ սումն է, այլ հաստատումը, զբա պահանջը:

Կարող են ասել, թե դիալեկտիկան երկույթը տալիս է մեջ իր բոլոր կապակցությունների մեջ, իսկ լոգիկան այն վերցնում է իր մի կողմով միայն: Այդ ճիշտ է: Զէ ոք լոգիկան «կայուն մեծությունների» օրինաչափությունների սիստեմ է: Պա նյութի, այսպիս ասած, ստուգիկ վիճակների վերաբառությունն է մեր գիտակցության մեջ: Սակայն այդ մի կողմը կամ նյութի ստուգիկ վիճակը նա վերցնում է իր ամրողջությամբ: Բացի այդ, միթե դիալեկտիկայի կողմից հարցի բազմակողմանի ընդգրկումը նշանակում է հակադիր հատկանիշների կամ չհամընկնող ծայրաթեների միացում մի ընդհանրության մեջ: Բնավ էլ չէ: Մարքսիստական դիալեկտիկան դեմ է այն բանի, երբ միևնույն երեսութին միաժամանակ երկու հակադիր հատկանիշներ են վերագրում, կամ երկու տարրեր արժեք ունեցող երեսութներն արհեստականորեն միացնում են իրար հետև Մերկացնելով Բուխարինի հակամարքսիստական դիրքավորումը պրոֆմիությունների հարցում, Լենինը զբում է՝ «Տեսականորեն Բուխարինը սայթաքեց գետի եկեղեկտիզմը քարոզելով միացնել քաղաքական ու տնտեսական մոտեցումները» իրար հետ: Առհաս սարակ «ասել, (...), թե քաղաքական մոտեցումը տնտեսականին «համարժեք է», որ կարելի է վերցնել «այսը և այնը», նշանակում է մոռանալ մարքսիզմի այրութենը»: «Այսը և այնը» տարբեր բաներ են, տնտեսական ու քաղաքական մոտեցումները պրոֆմիությունների մեզանում խաղացած դերի հարցը որոշելիս մեխանիկորեն միացվել չեն կարող, որովհետև «առանց քաղաքական ճիշտ մոտեցման հարցին, ավյալ գասակարգները տիրապես տիրապես պահպանել չի կարող, հետեարար անկարող է լուծել նաև իր արտադրական խնդիրները»*: Այս նշանակում է, որ տվյալ մոմենտում առաջադրված հարցին պետք է առաջի հերթին քաղաքական մոտեցում ունենալ: Հակառակ հարցադրում վնասից բացի, պրոլետարիատին երբեք օդուտ բերել չէր կարող: Որտեղ պետք է փնտաել այդ հարցադրման գնուսելողիական սիսալը: Անշուշտ տրամաբանության երկրորդ օրենքի անտեսման մեջ: Եվ դա բոլոր օպրորտունիստների, հա-

* Լենին, հ. 26, էջ 126.

կամարքսիստական տարրերի մտածողության հիմնական առաջնորդից մեկն է: Անա ձեզ օրինակ նաև անարխիստները՝ Նրանցից ոմանք Մարքսի և Էնգելսի մատերիալիզմը համարում էին մոնիստական, այդ պատճառով էլ մերժման արժանի, իսկ մյուսները՝ գիտական մտքի այդ երկու հակաների ուսմունքի հանդեղ իրենց նույնատեսակ դիրքը արգարացնելու համար մերոհիշյալ մատերիալիզմը համարում էին ոչ մոնիստական, վուգարք Այլ կերպ ասած, մինչույն օրեկտին միաժամանակ մերագրում էին երկու վուխագարձ բացասող հատկանիշներ, ուստաշակ անելով լոդիկայի երկրորդ օրենքը: Ընկեր Ստալինը այդ քայլը համարում է հակապիտական ու դրում է՝ «մեկն այս կողմն է քաշում, մյուսը՝ այն: Եկ ու որոշիր, թե ո՞վ է ճիշտ՝ առաջինը, թե երկրորդը: Դեռ իրենք Մարքսի մատերիալիզմի արժանիքների կամ թերությունների մասին իրար միջև համաձայնության չեկած, գետ իրենք չհասկացած, մոնիստական է դա թե ոչ, գետ իրենք չպարզած ինչն ավելի ընդունելի է՝ վուլգար թե մոնիստական մատերիալիզմը, արդեն իրենց պոռուսախոսությամբ խլացնում են մեղ՝ որպես թե իրենք ջախջախեցին մարքսիզմը»*:

Մի որևէ ուսմունք հերքելու կամ ապացուցելու համար ամենից առաջ պետք է իմանալ, թե ի՞նչ է այն իրենից ներկայացնում, այսինքն չպետք է դրան միաժամանակ հակադիր բնորոշումներ տալ: Քննադատելով Կիևսկուն, Լենինն ասում է, թե «արամաբանական հակասությունները—ինարկե տրամաբանական ճիշտ մտածողության զեղքում, ոչ անահասկան, ոչ էլ քաղաքական վիրլուծումների ժամանակ չպիտի լինին»**: Այս նշանակում է, որ դիտական ճանաչողությունը հակասություն չի հանդուրժում, չի կարելի որևէ թեղ ապացուցված համարել եթե այդ բացասող թեղը չի հերքված, այլ կերպ ասած, եթե տրամաբանական հակասությունը չի վերացված: Որպեսզի ապացուցի պարտիայի մասին եղած լենինյան ուսմունքի ճշությունը, ընկեր Ստալինը մեկ առ մեկ քննության է առնում դրան հակադրվող մենշևիլյան թեզերն ու հերքում այդպիսիք, ցույց

* Ստալին, հ. 1, էջ 322—23:

** Լենին, հ. 19, էջ 206.

տալով, որ միենույն կաղմակերպության մասին միաժամանակ արտահայտված երկու իրարամերդ տեսակետներից ճիշտ է լինինյանը, սիալ է մենչելիյանը:

Աենինն առում էր, թե բանվորական պարտիայի համար հարկավոր են կաղմակերպչական այնպիսի սկզբունքներ, որոնք կկարողանան սահմանագծել մեղ ամեն տեսակի օպորտունիտական տարբերից: Այդ սկզբունքից էլ ենելով Լինինը ձևակերպեց մեր պարտիայի կանոնադրության առաջի կետը: Մենցնիկները հակառակ դիրքերից ենելով տվին իրենց ձևակերպումը, որը, Պլիստովի խոսքերով ասած, «բուրժուական ինդիվիդուալիզմով ներծնիված ինտելիգենտների» համար մեծ առարկեղ էր ստեղծում: Հակառակ առաջինը երկրորդին, մերժելով երկրորդը, ճիշտ համարելով միայն առաջինը, ընկեր Ստալինը ենում է հենց հակասության օրենքից: Այդ օրենքը ուրիշ բան չի պահանջում, բայց եթե հակառակությունների կոմպրոմիսային միացումների կատագորիկ մերժում: Առաջնորդվելով հենց այդ սկզբունքով, ընկեր Ստալինը գրում է՝ «Գյուղացիները պետք է վերջնականապես յուրացնեն այն միտքը, թե պոմեջ չիների հետ հարկավոր է ոչ թե առետուր անել, այլ գրանցեմ կովել: Հարկավոր է ճորտատիրական լուծը ոչ թե կարկատել այլ վշտեր, որպեսողի ճորտատիրության մնացորդները մեկընդմշշտ ոչնչացվեն»*:

Ի՞նչպես կարելի է անարխիզմն ու մարքսիզմը իրար հետ համակցել, եթե նրանց դավանած սկզբունքները «մեկը մյուսի բացասումն են», ասում է ընկեր Ստալինը: Քանի որ մենք մարքսիստներ ենք, անարխիստներ լինել չենք կարող, որովհետեւ «անարխիստների անկյունաքարը անեատն է», իսկ մարքսիստներինը՝ «մասսան: Աւրեւին մեկը կարող է կամ մարքսիստ լինել կամ ոչ մարքսիստ, կամ անարխիստ լինել, կամ ոչ անարխիստ, իսկ երկուսն էլ միաժամանակ՝ երեք»:

Հակասության օրենքի բնորոշ կողմը հենց այն է, որ դա հանդես է գալիք որպես կողմերի այնպիսի հարաբերություն, եթե երկրորդը հանդիսանում է առաջինի, այսինքն շատ որոշակի մի հատկանիշի բացասումը առանց դրան մեկ այլ հաս-

* Ստալին, հ. 1, էջ 217.

ատառուն պրույթ կամ հատկանիշ հակադրելու Այս հանգամանքը հակասության օրենքին տալիս է կոնկրետ բնույթ, որովհետև նպատակ է գրվում ապացուցել ինոնց առաջադրված առաջին քեզի և ոչ թե մեկ այլ ուրիշի ճշտությունը:

Այսպիսով հակասության օրենքը գեմ է ամեն տեսակի անորոշությանը, ինչպես և ճապաղ կամ շատ ընդհանուր բնորոշումների: Լենինն ասում է, թե տնտեսական հակասություններ» չի թույլատրում, վերցնում է տնտեսական և միայն տնտեսական (և ոչ թե ընդհանրապես բացի առաջին) կատեգորիաները ու զրանցից բիեցնում է բանվորական փողի անհնարիկությունը^{*}: Ուրեմն հակասություն մենք ունենք այն զնագում, երբ գրականորեն առաջադրված մի թեղ այլևս որևէ այլ գրանից սարբեր թեղ չի հանդուրժում: Տնտեսական անալիգի ժամանակ տնտեսական կատեգորիաների կողքին այլ կատեգորիաներ գնել չի թույլատրվում: Մարզսի «Կապիտալի» առաջի զըլիում քաղաքականության կամ քաղաքական ձևի մասին խռով չկա, վերլուծումը այստեղ օվիմիայն տնտեսական՝ ...ապրանքների փոխանակության զարգացման» վերլուծում է:

Հակասության օրենքը հետեւզական մտածողության օրենք է, դրա հիմնական խնդիրն է ցույց տալ որ եղբակացության ու փաստարկումների միջև հակասություն գոյություն չունի: Այլ կերպ ասած, հակասության օրենքը սերտորեն կապված է ապացուցման գործողության հետ: Հռետորը, պիտուականը, մինչեւ իսկ բանասանեղծը, երբ ուզում է մի բան ապացուցել, ըստ այդ օրենքի պետք է հռոգ տանի այն մասին, որ բերված փաստերն ամբողջությամբ համընկնեն արդող եղբակացության հետ, վերջինը օրգանապես ու լիովին բխի առաջիններից: Սա միաժամանակ դիմելու կամ կանաչական մտածողության օրենքն է, որովհետեւ գիտելիտիկայի բանաձեռք, ըստ որի միենույն երեսությը միաժամանակ և այն է և այն չէ, լոգիկայի հիշյալ օրենքը պարունակում է իր մեջ վերառված ձեռվի Բանաձեռքի առաջի մասը՝ թե երեսույթը այն է, վերցվել է լոգիկայի հակասության օրենքից, որի ինդիքը հասկացության կայունության ապացուցումն

* Լենին, հ. 19, էջ 206:

Է: Բանաձեկ երկրորդ մասը սերտորեն կապված է առաջինք
հետ, որովհետև դա որոշ, հարաբերականորեն կայուն վիճակի և
ոչ թե առհասարակ բացասում է: Եթզ ասում ենք, թե իր զարգաց-
ման հետեւանքով կապիտալիզմը միաժամանակ և այն է և այն
չէ, բացասումը միշտ էլ կապիտալիզմի, դրա միշտ իսկ որոշ
ձեր, ասենք օրինակ՝ արդյունաբերականը առևտուրականի, ֆի-
նանսականը արդյունաբերականը կապիտալի, իսկ սոցիալիզմը
կապիտալիզմի սկզբունքային բացասումն է: Եթե չինեին կա-
պիտալի այդ ձեերը, կամ կապիտալիզմն առհասարակ, դրանց
բացասման մասին խոսք լինել չեր կարող: Այս հշտնակում է,
որ կա հարաբերականորեն կայուն վիճակ, որի առողջապահումը գի-
տական ճանաչողությունը դարձնում է անհնարի Անա թե ինչու
լոգիկան գիտելիտիկա է, իսկ դիալեկտիկան լոգիկա:

Բուրժուական մտածողների կարծիքով հակասությունը ոչ
թե իրական է, այլ մեր մտածողության օրդանական պակասը:
Կանտի ուսմունքն անտինոմիաների մասին հենց դրա վրա է
կառուցված: Զիգվարդը, Վաղգիտավոլեր և այդ կարգի այլ մտա-
ծողներ գտնում են, որ հակասությունը արամարանական սխալ-
մունք է, որը պետք է ուղղել: Բայց դեռ Հեգելն առաջացնեց,
որ հակասությունը հատուկ է օբեկտիվն, դա սուբյեկտի մտավոր
ակարության արտահայտությունը չէ: Դեռ ավելին, նա հակա-
սությունն ավելի էական համարեց, քան նույնությունը: Զէ
որ հակասությունը կենդանության հիմքն է և առանց հակա-
սության շարժում, ուստի և կյանք չկա: Ժամանակակից գի-
տական համար հակասության օբեկտիվ լինելու մասին կաս-
կած չկա:

Հաղթահարելով Հեգելի իդեալիզմը, մարքսիզմ-լինինիզմը
վերջնականորեն ապացուցել է, որ հակասությունը նյութի գո-
յության հիմնական ձեն է, իսկ մտածողության հակասությունը՝
այդ ձեր անդրագարձումը միայն: Լենինն ասում է, թե երբ
կինսկին «ամեն մի հակասություն», որը նշմարվում է մարդ-
կային գատողությունների մեջ, արամարանական հակասու-
թյուն է «համարում», «դա գատարկ կրկնաբանություն է»: Իրա-
կանության մեջ «կինսկին այդ կրկնաբանության միջոցով
հարցի եռյալուն է շրջանցում, արդյոք այդ «արամարանական»
հակասությունը երկու տնտեսական երեսյթների կամ զբայթ-

Ների, թե երկու քաղաքական, կամ տնտեսական ու քաղաքական գրույթների միջև եղած հակասություն է» (էջ 209). Լենինը ցույց է տալիս, որ իրական հակասությունը հենց վերջինն է։ իսկ տրամարանականը զրա վերաբաղրությունը միայն։ Տրամարանական մտածողության մեջ այդ անդրադարձումը հանդես է զալիս որպես առաջուց արված դրական գատողության բացասաւում։ Օրինակ, երբ մենք ընդունում ենք, որ Ա չի կարող Յ լինել գրանովի արդեն հաստատում ենք, որ հակառակ պընդումը ճիշտ չէ, Լենինն ասում է, որ իմպերիալիզմը քաղաքական վերնաշնչնք չէ, ուստի սխալ է, երբ այն նույնացնում են արտաքին կամ մի այլ տեսակի քաղաքականության հետ։ Այստեղ զրական դատողությունը, որը բացասվում է, իմպերիալիզմի սխալ բնորոշումն է։

Սակայն այդ բացասումը կամ հակասությունը ինքնանպատակ չէ, այլ մարդկային միտքն առաջ տանելու, ներկա դեպքում ճիշտ բնորոշում գտնելու համար է։ Անշուշտ տրամարանական մտածողությունը կարող է ունենալ նաև ուրիշ տեսակի հակասություններ, հակասություններ, որոնք իրականության ծուռ վերաբաղրությունն են հանդիսանում։ Բայց զիտությունն այդ կարգի հակասություններով չի զրայվում, նրան հետաքրքրում են այնպիսի հակասություններ, որոնք պրովերսի գործին են՝ ծառայում, որոնք դինում են մեզ աշխարհի վերափոխման համար մղած մեր կովում։ Պէխանովն ասում է, թե «հակասություն էլ կա հակասություն էլ երբ պ. վ. վ. իր «Կապիտալիզմի ճակատագիշը» կամ «Ռուսաստանի տնտեսական հետազոտության արդյունքների» առաջի հատորում ամեն քայլափոխին հակասում է ինքն իրեն, ապա նրա տրամարանական մտքերը կարող են նշանակություն ունենալ սոսկ որպես «մարդկային փաստաթղթեր»... Կան և ուրիշ կարգի հակասություններ։ Աըրանք, նույնքան անկասկածելի, որքան պ. վ. ի հակասությունները, վերջիններից տարբերվում են նրանով, որ մարդկային միաբը չեն քնացնում, զրա զարգացումը չեն կասեցնում, այլ այն առաջ են հրում ու երբեմն այնքան ուժից են հրում, որ իրենց հետեւանքներով ավելի արդյունավետ են դառ-

նում, քան ամենակուռ թերիաները*: Ցրամաբանական մտածողության երկրորդ օրենքը այս հակասության բացասումը չէ, այլ գրանում հանդես եկող նույնության հաստատում, հենց դրա համար էլ հետևողական մտածողության հիմնական սկզբանքներից մեկը:

Ցրամաբանական տեսակետից հետևողական մտածողությունը հասկացությունների որոշակիություն ու կայունություն չէ: Նույնության օրենքի համեմատությամբ հակասության օրենքըն այդ ուղղությամբ այն նոր քայլն արեց, որ հաստատեց, թե մինույն օրեկար միաժամանակ ու մինույն հարաբերություններում վերցրած երկու հակադիր հատկանիշներ ունենալ չի կազող, սակայն երրորդ հնարավոր վիճակի հարցը նա թողեց անորոշ, որի հետևանքով էլ ստեղծած որոշակիությունը տակավին թերի մեջ Այդ բանը կատարեց երբորդի բացասաման օրենքը:

4. ԵՐՐՈՐԴԻ ԲԱՑԱՍԱՐԱՆ ԾՐԵՆՔԸ

Դեռ Արխատուելն ասել է, թե «երկու՝ (մեկը մյուսին) հակասող դատողությունների միջև ոչինչ միջինը լինել չի կարող**: Ուստի A կամ B է կամ C, երրորդ վիճակը անհնարքան է: Սա է լոգիկայի երրորդ օրենքի ընդհանուր բնորոշումը: Մրա հետապնդած նպատակը նույնն է, ինչ որ նախորդներինը՝ թույլ չտալ, որ միտքը կազմալուծվի, ապահովել դրա կայունությունն ու մշտականնությունը: Եթե ամեն անդամ հակադրություններն ունենան իրենց միջինը, այդ դեպքում ոչինչ որոշակի ասել հնարավոր չի լինի, Դրական, թե բացասական է ֆաշիզմը: Մրան կարող է միայն մի պատոսխան լինել՝ ֆաշիզմը բացասական է, չկա ու չի կարող լինել մեկ ուրիշ հատկանիշ, որը հակադրության երկու ծայրաթերթ միացնի, ստեղծի դրանց ինչ որ միջինը: Ուստի երրորդի բացասաման օրենքը՝ միանդամայն հիմնավոր օրենք է, դա ելնում է իրական փաստերից, տալիս է մեզ կողմերի ճշմարտացի հարաբերությունը:

Պետականվածում է, թե «կամ-կամ» Փորմուլան մետա-

* Պետականվածում, հ. 7, էջ 70—71.

** Մետաֆիզիկա, գր. 4, գլու. 7, էջ 75.

ֆիզիկ ֆորմուլա է, ճշմարտության կոնկրետության ժխտումը*,
 Անկասկած Պիեխանովն այնքան էլ հեռու չէ ճշմարտությունից,
 եթե նկատի ունենանք այն փաստը, որ գպրոցական լոգիկայի
 ներկայացողիշները այս-այս, ոչոչ բանաձեռ միակողմանիո-
 քեն հակադրել են և այս և ոչ և այս բանաձեռն, այսինքն
 այն օգտագործել են բացասիլու շարժման, որպես պրոցեսի,
 ռեալականությունը: Բայց դրա մեջ ինչ մեղք ունի ինքն այդ
 բանաձեռը: Պիեխանովի կարծիքով կամ-կամը մետաֆիզիկ
 հարցագրում է Բայց միթէ այն, ինչ որ իրականության անդ-
 րադարձումն է, դրա տրամաբանական բանաձեռ, կարող է հա-
 կաղիալեկտիկական լինել: Դիալեկտիկայի, որպես դիտության
 բնորոշ գիծը հնաց այն է, որ դա ոչ թե մտացածին, այլ ունալ
 հարաբերությունների, օրեկտիվ, մտածողից անկախ դրյություն
 ունեցող ընդհանուր օրինաչափությունների սիստեմ է: Ոչ մե-
 ծիմք չկա սաելու, թե կամ-կամ բանաձեռ հնարավի բան է,
 որ բնության կամ հասարակության մեջ ամեն ինչ բացարձա-
 կորեն այնպես է խռանված իրար հետ, որ ոչնչի հարաբերա-
 կան սահմանը որոշել հնարավոր չէ: Անշուշատ անընդհատ զար-
 դացումը իրավունք է տալիս մեղ ասելու, որ, ասենք, օրինակ,
 միենույն օրգանիզմը միաժամանակ և այն է և այն չէ: Բայց
 միթէ դրանից հետեւում է, որ մենք գորախն գորտ, շանը շուն-
 անվանելու իրավունք չունենք, որ բնության մեջ չկա մի կեն-
 դանի, որին մենք կարողանանք ասել, թե սա կամ գորտ է կամ,
 շուն և ոչ թե միաժամանակ և այս է և այն: Եթե իսկապես
 այդ այդպիս է, ապա ինչպես է եղել որ Պավլովը տասնյակ տա-
 րիներ շարունակ գործ ունենալով այդ կենդանիների հետ, եր-
 բեք դրանց իրար հետ չի շփոթել: Այս նշանակում է, որ ան-
 վերջ զարգացումը ոչ միայն չի բացասում, այլև անհրաժեշտու-
 թեն ենթադրում է, որ զարգացող օրեկտը միաժամանակ հավա-
 սար է և ինքն իրեն, որ զա ոչ միայն փոխվում է, այլև չի
 փոխվում, այսինքն տվյալ էության սահմաններում շարունա-
 կում է հարաբերականորեն մնալ նույնը ու չվերածվել սեփա-
 կան: հակադրությանը

* Պիեխանով, հ. 11, էջ 45—6:

Աենինը առում է, թե «բնագիտությունը չի թույլատրում կասակածելու այն բանում, որ մինչ մարդկությունը երկրի գոյության մասին եղած նրա պնդումը ժիշտ է»*: Այն, ինչ որ կա, չի կարող միաժամանակ և չլինել, եղածի զարգացումը դրա գոյության բացասումը չէ: Եթե երկրագնդի գոյությունն անհկատկած է, ապա չի կարելի ասել, թե դա չկա, կամ թե ևս այդ մասին տրաշակի բան չկիրակ, այսինքն կանգնել միջին դժի տևակետի վրա, որն իմացաբանության միջ ազնուարիցիզմն է:

Պլեխանովն ասում է, թե կամ-կամ բանաձել կոնկրետ ճշմարտության բացասումն է: Մետաֆիզիկ մտածողների մաս այդ այդպիս է, ինչ վերաբերում է դիտլեկտիկ մտածողին, ապա նրա համար կամ-կամը կոնկրետ ճշմարտության հաստատման մի ձև է, ըստ որում անհրաժեշտ ձև: 1917 թ. հոկտեմբերին Լենինը գրում էր՝ «Դրությունը պարզ է՝ կամ կորնիլովյան դիկտատորա, կամ պրոլետարական և աղքատ գյուղացիական խավերի դիկտատորա»**: Կամ-կամ: Այստեղ այդ բանաձել կոնկրետ ճշմարտության արտահայտության լավագույն միջոց է, և եթե կուզեք, այս դեպքում միակ միջոցը:

Եթե անվերապահորեն ընդունենք Պլեխանովի տեսակետը և կամ-կամ բանաձել ամեն անդամ փոխարինենք և այս և ոչ քանաձնով, այդ գեղեցում մենք ոչ մի բանի մասին ոչինչ որոշակի ասել չպիտի կարողանանք, ոչ մի որոշում չպիտի ընդունենք ու շարժումն ամեն ինչ հայտարարերով պիտի մռանանք նալատակը, որն օպերատունիզմի ամենամեծ ցանկությունն է: Խոռոչ 1905 թ. ռեզուցիայի ժամանակ մենշևիկների դիրքի մասին ընկեր Ստալինն ասում է, թե նրանք «անխողորեն ըլունարարելով ոչնչի մեջ հանցավարա չեղող լսողի կան», ցանկանում էին նմանվել և լիբերալներին և սոցիալ-դեմոկրատներին մի կողմից հայտարարելով, որ իրենք բուրժուազիայի թշնամիներն են, մյուս կողմից էլ գտնելով, որ ո. գ. չի կարող մասնակցել ռեզուցիային: «Անառարկելի է, որ այստեղ «փոքրամասնության» լողիկան երկու ոտով էլ կազում է: Երկսից մեկը, կամ մենք նմանվելով լիբերալներին, պետք է հրաժարվենք այն,

* Լենին, հատուք 13, էջ 100:

** Լենին, հատուք 21, էջ 381. ընդունում իմ է—Հ. Գ.:

մտքից, թե պրոլետարիատը ունուցիայի դեկավարն է, այդ գեղքում ժամանակավոր կառավարության մեր ունենալիք մասնակցության հարցն ինքնին ընկնում է, կում մենք պետք է բացահայտորեն այդ սոցիալ-դեմոկրատական իդեան ընդունենք— դրա հետ միասին ընդունենք նաև ժամանակավոր կառավարությանը մասնակցելու անհամարելիությունը»*, ասում է ընկեր Ստալինը: Կամ-կամ. այսուղ միջն դիմ գրյություն չունի: Մենցիկները միշտ աշխատում էին միջին զծի քաղաքականություն վարել դիտակտիկայի անվան տակ թագցնելով իրենց օպորտունիզմը: Ընկեր Ստալինը մերկացնում է այդ օպորտունիզմը ցույց տալով, որ դիալեկտիկան ոչ մի առնչություն չունի և այս ոչ բանաձևի բացարձակ միահաղթանակ օգտագործման հետ:

Եվ այս և ոչ բանաձևը ցույց է տալիս մեկ պրոցեսը, օրեկտի լինելիությունը, որ դա հարատի շարժման մեջ է և շարունակ բացասում է ինքն իրեն: Այդ բանաձևը տարածվում է ամեն բանի վրա, գրան ենթակա են բոլորը, որովհետև ոչինչ տնշարժ չկա: Բայց դրա հետ միասին ամեն մի փոխվող իր, տռաբեկա կամ երեսությունի հարաբերականորեն իր կայտն վիճակը, հանգստի իր մումենուը, նա ունի հասունացման իր աստիճանը, երբ ին էությունը պետք է փոխարինվի մի նոր էությամբ և չի կարելի այդ երկու էությունները շփոթել իրար հետ, և վերջապես ամեն մի իր որոշ հարաբերության մեջ է մեկ ուրիշ իրեն հետ, որը ոչ միայն դրանց կապն է ցույց տալիս, այլև տարբերությունները: Այս այս ամենը հնման վեճակներու հարաբերություններ արտահայտվում են հենց կամ-կամ բանաձևի միջոցով:

Բայց արդյոք դրանով մենք չենք հրաժարվում դիալեկտիկայից: Ոչ, տառմ է ընկեր Ստալինը: Այն ժամանակ, երբ ուսուլուցիոն կրիզիսն ամենուրեք խորանում է ամեն տեսակի «տատանում» անթույլարելի է՝ կամ ուսուլուցիան դեպի վերելք է զնում ու մենք պետք է այն հասցնենք մինչև վերջը, կամ դա նվազում է և մենք չենք կարող, չսետք է նման ինդիր մեզ պնդնք: Եվ իզուր է Ռուդենկոն կարծում, թե նման հարցադրումը ոչ դիալեկտիկական է, մուզինկոն միջին դիմ է որոնում, նա ուզում է ասել, որ սեղլուցիան և բարձրանում է և չի բարձրա-

* Ստալին, համուր 1, էջ 142. Ընդունեմ իմ է.-Ն. Գ.:

նում, և պետք է այն հասցնել մինչև վերջը և պետք չէ, որովհետո հետեւ, նրա կարծիքով, հենց նման հարցադրում պարտավորեցնում է մեղ դիախեկտիկան: Մենք մարքույան գիտական այդ կերպ չենք պատկերացնում մեզ... »(239), առում է ընկեր Ստանիսլավ Մարքույան գիտական սկզբուցիցն գործողության մեջ թող է, իսկ և այս, և ոչ բանաձևի միակողմանի բացարձականացնումը զբարձր է մեղ այդ գործողությունից:

Ի՞նչպիսի անեխնք մենք 1941 թ. հունիսի 22-ին, երրորդ գերամանական Փաշչետները հարձակվեցին մեղ վրա, կարելի՞ է ասել թե մենք ի՞ պետք է կռվեինք, և՛ չպիտի կռվեինք նրանց գեմ ոչ չէր կարելի, որովհետո դա կիներ հակադիքալեկտիկական: Դիմաց, լեկտիկան ուսուցանում է, որ պրոգրեսիվ և ոեզրի պայքարի ժամանակ պետք է ամեն բան անել, որպիսզի առաջինի հազվայշմանորեն ապահովվի, ուստի նման գեղագիտում երկընտրանք լինել չի կարող ու մենք պարտավոր ենք գործել կամ-կամի սահմանած կանոնավոր:

Դիտական կոնկրետ ճանաչողության, կոնկրետ ճշմարտությունների հաստատման մեթոդ է: Եվ այս և ոչ բանաձևի միտքողմանի օգտագործումը անհնար է դարձնում որոշելու, թե ովքյալ իրը ավյալ ժամանակամիջոցում ու կոնկրետ հարաբերությունների մէջ ի՞նչ է իրենից ներկայացնում: Օրինակ, մեր այս անցման շրջանի համար ի՞նչ նշանակություն ունի «ազգային» ըստ ձերի, ինտերնացիոնալ ըստ բովանդակության կուլտուրային լոգունգը, գրական, թե բացասական: Մենք այս հարցին չենք կարող պատասխանել՝ և այս և այն, հենց դա կինետիկականի, ուստի և կոնկրետ ճշմարտության սահմանումը ձշմարիտ այն է, որն ամենից լավ ու բազմակողմանիորեն է վերաբարպում իրականությունը, որը չի քողարկում իրերի ռեալ հարաբերությունները ու փաստերը չի իրեղաթյուրում: Ուստի առաջադրված հարցի պատասխանը կարող է լինել միայն մեկը՝ այդ լոգունգը մեր էպոխայի կուլտուրական շինարարության ու ժողովուրդների ինտերնացիոնալ գաստիարակության միակ ճիշտ լոգունգն է: Այս նշանակում է, որ կամ-կամ բանաձևը, երբ այն միակողմանիորեն չի օգտագործվում, արհեստականորեն չի բացարձականացվում, ոչ միայն գիտեկտիկայի գեմ չէ, այլև գրա կիրառման անհրաժեշտ ձևերից մեկն է հանդիսանում:

Ամանք կարծում են, թե կամ-կամ բանաձել ձգտում է բացարձակ ճշմարտություններ սահմանել մի բան, որ դիալեկտիկան մերժում է: Դա ճիշտ չէ: Ամենից առաջ երրորդի բացաման օրենքը հակասության օրենքի լրացումն է, որը, ինչպիս տեսանք, առացացուցում է, թե մի հնույն առարկան միաժամանակ ու մի հնույն հարաբերություններում վերցրած երկու հակագիր հատկանիշներ ունենալ չեն կարող, այսինքն առարկան վերցնում է իր կոնկրետ ճեի, վիճակի ու կարտկցությունների մեջ: Բացի այդ, եթե երրորդի բացաման օրենքն ասում է՝ կամ ճիշտ պետք է համարել, օրինակ, թե Նապոլեոնը մեռել է 1821 թ. մայիսի 5-ին, կամ սխալ ապա գրանով նա դիալեկտիկայի գեմ չի մեղանչում:

Անինը ծաղրելով Բողդանովին բացատրում է՝ եթե չես կարող մխտել, թե Նապոլեոնը մեռել է 1821թ. մայիսի 5-ին և չես պնդում, թե դա երբեք կարող է հերքվել, ապա դու ընզունում ես, որ դա ճշմարտություն է և այն էլ հավերժական ճշմարտություն: Առաստարակ այնպիսի ճշմարտություններ, ինչպիսիք են՝ Փարիզը զանգում է Ֆրանսիայում, կամ Լոնդոնը Անգլիայում, «հավերժական բացարձակ ճշմարտություններ» են, որոնց մասին կասկածել կարող են միայն ինելագարները»* գրում է Անինը: Երբորդի բացաման օրենքը ահա նույն այդ կարդի կասկածների վերցման օրենք է, նա չի կարող հանդուրժել, որ մեր երիտասարդությանն ուսուցանեն, թե Փարիզը և Ֆրանսիայումն է, և Ֆրանսիայումը չե, կամ որ Բնինը հավատացնի՝ թե Ֆրանկոն խուլուգերմանական փաշիստների գրած մարդն է, բայց Փաշիստ չէ: Հետեղովական մտածողությունը միաժամանակ միենույն հարցում երկու հակագիր տեսակետներ պաշտպանել չի կարող: Այս է ուսուցանում մեղ հենց գիտելիքիկան: Ռւսանի լոգիկայի երրորդ օրենքը ոչ թե դիալեկտիկային հակառակ ընթացող մի օրենք է, այլ գրա հաշակած սկըզբանքների ապացուցման տրամաբանական գործողություններից մեկը:

Բուրժուական մտածողների հիմնական արտան այս հարցում եղել է միալողմանիությունը. նրանք լոգիկայի օրենքների

*) Անին, հ. 13, էջ 107—8:

մեջ տեսել են շարժման բացասաւմ և այդ իմաստով էլ հակագործել դիալեկտիկային: Իրականում այդայդպես չէ. լոգիկան ու դիալեկտիկան միևնույն օքեկտի զարդացման տարրեր տարինանների մասին եղած դիտությունները են, զբանց զանազանությունը ոչ թե այն է, որ մեկը մետաֆիզիկական է, իսկ մյուսը ոչ այլ այն, որ զբանցից յուրաքանչյուրը տարրեր օբյեկտաչափությունների սիստեմ է:

Կամ-կամ բանաձեռ փաստորին հակասությունների միասնություն է: Կամ-կամը բաժանման գործողության բանաձեռ է, որը անջատելով առարկային կամույշականորեն վերապրվող հատկանիշն առարկայից, միաժամանակ զրա հետ կապում է իրա իսկ ունեցած հատկանիշը: Օրինակ, երբ ասում են, թե Վասակ Սյունեցին կամ դավաճան էր, կամ ոչ, զբանով մի կազմից ցույց է տրվում, որ տվյալ տեսակը մտնում է իր ունի մեջ, այսինքն զբանց միջև օրդանական կապ կա, մյուս կազմից էլ որ ոույն այդ տեսակը մեկ ուրիշ, բայց իրեն վերապրվող սեսի հետ առնչություն չունի, որ դրանք մեկը մյուսին բացառում են: Առհասարակ լոգիկան ու դիալեկտիկան հակազտություններ չեն, լոգիկան դիալեկտիկան է, իսկ դիալեկտիկան միաժամանակ հհնվում է լոգիկայի օրենքների վրա, որպես նաև իր օրենքներ: Լոգիկայի և դիալեկտիկայի միջև այս հարաբերությունը հանգեսէ զալիս լոգիկայի նաև չորրորդ՝ բավարար հիմքի օրենքի մեջ:

5. ԲԱՎԱՐԱՐ ՀԻՄԻՆՔԻ ՕՐԵՆՔ

Առաջի երեք օրենքների համար մարդկությունը պարտական է Արիստոտելին, իսկ չորրորդ օրենքի հիմնագիրը համարվում է Լայրնիցը: Ամեն ինչ իր բավարար եիմքն ունի: Այս է չորրորդ օրենքի տարածված սահմանումը: Ընտրելով նման ձեւվակերպում, Լայրնիցը նկատի ուներ, որ մեխանիկական պատճառակցությունը մի բանի համար տակավին բավարար հիմք լինել չի կարող, այդպիսին է միմիայն վերջնական պատճառը: Մեխանիկական պատճառակցությունը մասնակի բնույթ ունի, ուստի դա բուն հիմքի նկատմամբ միատեսակ արտաքին է, կարեվոր է դանել էականը հաղթահարելով, կամ ավելի ճիշտ վե-

բասելով այդ մեխանիկականը: Զնայած իր հետապնդած իդեալիստական նպատակին այդ օրենքը ծառայեցնելու ձգտմանը, այնուամենայնիվ Լայբնիցի մոտ կար մի առողջ տեսնդենց՝ սէտճառն՝ ու հիմքը չբաժանել իրարից ու չնոկադրել միմյանց: Լայբնիցից հետո, Գորմալ մտածողության շատ ներկայացուցիչներ աշխատեցին իրապես պատճառի և հիմքի միջև եղած տարրերությունը վերածել դրանց հտկադրությանը, այլ կերպ ասած այս օրենքը ևս կարձնել անբովանդակ մետաֆիզիկական: Մի ձև միայն:

Նվերինսկին ասում է, թե «հարկավոր է ոչ թե նույնացնել, այլ պատճառակիցության օրենքը խստորեն տարբերել բավարար հիմունքի օրենքից, ինչպես նաև պատճառը՝ հիմունքից»^{*}: Իբ տեսակետը հիմնավորելու համար Վկիենսկին բերում է այսպիսի օրինակ՝ երկաթը տաքությունից լայնանում է: Տաքանալը՝ պատճառ է, իսկ լայնանալը՝ հետևանքը: Մրանց միջև տրամարանական ոչ մի կապ չկա, որովհետեւ տաքությունը ջերմության աստիճանի ավելացում է, իսկ լայնացումը՝ ծավալիք: որոնք արամարանորեն չեն առնչվում: Բացի այդ, արամարանական կապը բացառություն չդիտե: Եթե տաքության և լայնացման միջև արամարանական կապ լիներ, այդ գեղքում պետք է որ տաքությունը միշտ էլ առաջացներ լայնացում, այնինչ ջրի տաքացումն 0°—4° ոչ թե ծավալի լայնացում է առաջա, այլ կրամառում: Ուստի պատճառն ու տրամարանական հիմքը նույնացվել չեն կարող: Եվ դա ճիշտ է: Հիմքը համընկնելով էության հետ, ավելի լայն է, իսոր և ընդհանուր, քան որևէ պատճառ առանձին վերցրած: «...Պատճառն ու հետեանքը հասկացություններ են, որոնք նշանակություն ունեն միայն առանձին երկույթների նկատմամբ կիրառելիս...»^{**}, ուստի ամեն անգամ դրանց բովանդակությունը կոնկրետ է, կապված զգայականությունների հետ ու տալիս են շատ որոշակի հարաբերություններ: Տրամարանական հիմքը ավելի մեծ ընդհանրացում է, և այդ հանգամանքը հնարավորություն է տալիս նրան մեր-

* Евденский А. И., „Логика как часто теории познания“, 1923 г., Москва-Петербург, էջ 296.

** Մարքս-Էնցելս, հ. 14, էջ 22.

Հեղու ամեն տեսակի բացառություններ ու հանդես գալու որպես եամբնեցեանուր պատճառ։ Այսպիսով արամարանական հիմքը տարբերվում է սովորական իմաստով վերցված պատճառից ոչ թե նրանով, որ դա «մաքուր բանականության» օրենք է և ոչ մի առնչություն չունի արտաքին աշխարհի առարկաների իրական պատճառական կապակցությունների հետ, այլ նրանով, որ դա նույն առարկաների ավելի ընդհանուր հարաբերությունների վերտադրություն է մեր գիտակցության մեջ, այնպիսի հարաբերությունների, որոնք բացառություն չգիտեն, առանց որոնց ոչինչ նոր բան առաջանալ չի կարող։

Հիմքն առնասարակ կապված է զարգացման, փոփոխման, հնի անհետացման, նորի առաջացման հետ։ Այստեղ ուր նման պրոցեսներ տեղի չեն ունենում, հիմքի մասին էլ խոսել ավելորդ է, որովհետեւ հիմքը այն է, ինչից որ ծնվում է մի նոր բան, ինչը որ ունենում է մի որեէ հատեանք։ Իսկ դա հատուկ է նաև պատճառին։ Երբ վկեղենսկին շիշաը դնում է «խիստ տարբերության» վրա, անտեսելով միասնությունը, նա միաժամանակ հատապնդում է երկու նպատակ՝ նախ որպես իդեալիստ բավարար հիմքի օրենքը ներկայացնել սոսկ որպես արամարանական օրենք, որը ոչ թե իրականությունից է վերցված, այլ մեր կողմից վերագրվում է այդ իրականությանը, և երկրորդ՝ արամարանական կանագորիաները մետաֆիզիկորեն բաժանելով իրարից հակագըել մեկը մյուսին։

Հեղելը շարագրելով Լայբնիցի տեսակետը բավարար հիմքի օրենքի մասին, ասում է, թե նա գրա մեջ շատ ավելի խոր իմաստ էր տեսնում, քան սովորաբար վերագրվում է այդ օրենքին, «նա պատճառների» հարաբերություն «էր փնտրում»*, բացատրում է Լինինը, «ամբողջությունը, որպես էական միասնություն»։ Այս նշանակում է, որ Լայբնիցը հակագըելով իր օրենքը մեխանիկական միասպազար գործունեությանը, հանձին զրան ավելի խոր ու հիմնավոր կերպով զրեց պատճառակցության հարցը, ոչ թե մի, առանձին վերցրած սովորական պատճառակցության օրենք է բավարար հիմքի օրենքը, այլ պատճառների հարաբերության, կամ այնպիսի պատճառական կապակցու-

* Փիլիսոփ. աետրակներ, էջ 141.

թյունների օրենք, որոնք համընդհանուր նշանակություն ունեն.
ու հանդիսանում են էության գրսերումը:

Խոսելով Դարվինի մասին, Էնգելսը զրում է.—«Հենց տռան-
ձին տեսակների ինդիվիդների նկրում եղած աննկատելի պա-
տահական տարբերությունները, որոնք կարող են մինչև տեսա-
կի բնույթի փոփոխման աստիճանը ուժեղանար որոնց մինչե-
խակ մոտավոր պատճառները հնարավոր է ցույց տալ միաժ-
շատ հազվադյուր դեպքերում, հենց գրանք հարկադրում են-
նրան կասկածելու բնախոսության ամեն տեսակի օրինաչափու-
թյունների նախկին հիմքի մեջ, կասկածելու տեսակի հասկացու-
թյան, գրա նախկին մետաֆիզիկական անվտանգելիության և
մշտականության մեջ»*: Օրինաչափությունը պատճառական ու-
լուզ հարաբերություն է և օրինաչափությունների հիմքն այդ-
հարաբերության, քուն առանձին օրենքների հաստատման համար-
պահանջնող հարաբերությունը: Բնախոսության հին օրինաչա-
փությունների հիմքը «մետաֆիզիկական անվտանգելիությունն»
է, մշտականությունը, այսինքն շարժման մի ձեի՝ մեխանիս-
տականի միակողմանի բացարձականացումը, որը սխալ է, իսկ
նոր օրինաչափությունների հիմքը տեսակների փոփոխելիու-
թյունն է, գրանց պատճառականությունը, որը անառարկելի փաստ-
է, ուստի և գիտական: Պատճառականությունը հարաբերություն-
ների ալելի ընդհանուր ձև է: հետեաբար ալելի լայն սկզբունք,
քան բնախոսական առանձին օրենքների կամ երեսությունների-
պատճառական կապակցությունները, հենց գրա համար էլ վեր-
ջինների համար ծառայում է որպես հիմք:

Հիմքն այն է, ինչի վրա որ բարձրանում են ալյալ հա-
րաբերությունները: Երբ առում եմ, եթե հողը լավ մշտակիք,
բերքը առատ կլինի, դատողության առաջի մասը հանդիս է զա-
լիս երկրորդի համար, որպես տրամաբանական հիմք, որը միա-
ժամանակ և պատճառ է, երբ գիտվում է գոյերի կամ իրական
պլուցեսների փոխադարձ կապի տեսանկյունից: Այս նշանակում
է, որ հիմքը նույնական պատճառ է, ըայց միայն թե սովորական
պատճառների պակասություններից զերծ էական պատճառ:

* Մարքո-էնգելս, հատ. 14, էջ 505:

Քի առատության պատճառները կարող են շատ լինել՝ նորմալ խոնավություն, որը կապված է համապատասխան քանակությամբ մթնոլորտային տեղումների հետ, հողի հանգստությունը, սերմի որակը և այլն, բայց այդ ամենի մեջ, մեր օրինակում, ուշադրությունը կենտրոնացված է հողի մշակման վրա, որը և զատողության մեջ հիմքի գեր է կատարում, երբ առում եմ՝ եթե հողը լավ մշակվի, բերքն առատ կլինի, նկատի եմ ունենում, որ մնացած պայմանները գոյություն ունեն, սակայն երեվույթի մեջ շրջադարձ առաջացնելու համար էականը հողի մշակումն է: Բայց ես կարող եմ փոխել գատարությունը և ասել՝ եթե սերմացուն լավորակ լինի, առատ բերք կստացվի: Այս գեղագում արդեն շրջադարձի համար էական է համարվում ոչ թե հողի մշակումը, այլ սերմացվի որակը, որի մասին եղած գատողությունն էլ հանդես է դալիս որպես հիմք: Այստեղից էլ եղրակացություն՝ իմմեր այն պատճառն է, որը տվյալ կապակցության մեջ վեռական դեր է կատարում, ընդհանուր առմամբ կամ այլ կարգի հարաբերությունների առկայության գեղագում դա կարող է որոշիչ նշանակություն չունենալ բայց տվյալ գեղագում դա հենց այդպիսին է, ուստի և հիմք: Ասած՝ սերիցս հետեւում է, որ հիմքը, չնայած իր համընդհանրության, միաժամանակ կոնկրետ է, կապված պատճականորեն առաջացած որոշ հարաբերությունների հետ:

Հիմքը կարող է երեւյթի գոյության անմիջական պատճառը չլինել այլ դրա հետեւանքը միայն: Օրինակ, երբ առում եմ, թե ունյակը տաք է, հիմք եմ ընդունում կամ իմ շոգելը, կամ էլ պատից կախված ջերմաչափը, որը ցույց է տալիս ջերմության մեծ աստիճան: Բայց ոչ առաջինը և ոչ էլ երկրորդը սենյակի ջերմության պատճառը չեն, այլ հետեւանք վառարանի վառվիլուն կամ թե չէ արկին, որն ընկել է սենյակի մեջ: Այս չի նշանակում, թե իմքը պատճառակցությունից իւրաքանչան բաժն բաժանվում է, այլ այն, որ դա միջնորդավորված պատճառակցությունն է, գեռ ավելին, որ առանց պատճառի հիմք չկատարությամբ զլամակորը: Եթե տաքության հետ կապված օրինակն առաջի գեղագն է, ապա բերքի առատության հետ կապված օրինակը՝ վերջի դեղքը:

էնգելսն ասում է, թե «...պատահականը ունի հիմք, որովհետև դա պատահական է...» (էջ 504), այսինքն պատահականությունը յուրօրինակ պատճառակցություն է: Ինչին կհանդիենք մենք, եթե մի բոպէ ընդունեինք, որ հիմքը սոսկ տրամարանական կատեգորիա է, որը իրերի պատճառական հարաբերությունների հետ ոչ մի առնչություն չունի: Այդ գեղքում պետք է ընդունեինք, որ պատահականությունը արամարանական ձև է միայն, զրա հիմքը մեր բանականության մեջն է և կապ չունի ռեալ իրերի օրեկտիվ պատճառակցությունների հետ: Բայց թե գա կլիներ հենց այն թեզի կրկնությունը, որի դեմ պայքարում է էնգելսը: Երբ էնգելսն ասում է, թե «պատահականությունն ունի հիմք» մերժելով վերոհիշյալ իդեալիստական ու մետաֆիզիկ հարցադրումը, առացուցում է, որ հիմքը ոչ թե բանականության մաքուր ձև է, այլ իրական պատճառակցություն:

Մարքսն ասում է, թե «ինչպես առանձին մարդու մասին հասարակոր չէ գատել այն բանի հիման վրա, թե ինչ է մտածում նու իր մտախն, ճշշտ այլպես էլ չի կարելի դատել նման է-պոխայի հեղաշրջման մասին, ըստ նրա գիտակցությանը: Ընդհակարակը, այդ գիտակցությունը պետք է բացատրել նյութական կյանքի հակասություններով, հասարակական արտադրողական ուժերի և արագագրական հարաբերությունների միջև եղած ընդհարումով»*: Այսունզ հիմքը միաժամանակ գիտակցության առաջացման նյութական պատճառն է: Մարքսը դրանց միջև ոչ միայն հակասություն չի տեսնում, ընդհակառակը նույնություն է սահմանում, երբ խոսքը վերաբերում է այսպես ասած վերջնական մոռագոր պատճառին: Այսպիսով ընդունելով լոգիկայի չօբյեկտ օրենքը, մարքսիզմը սրան ևս մյուս օրենքների նման ազատում է այն ազագաղաւներից, որին դարեր շարունակ ենթարկելով է գա ու դարձնում է տրամարանական մտածողության մի այնպիսի օրենք, որը հանդիսանալով նյութական աշխարհի օրենքի վերաբարությունը մեր գիտակցության մեջ, ծառայում է այդ աշխարհի հանաչողության, դրան մարդուն ենթարկելու միծագույն գործին:

* Մարքս-Էնցիկլոպեդիա, հ. 12, մ. I, էջ 7.

Բավարար հիմքի օրենքն ուսուցանում է, որ ոչինչ առանց հիմքի տեղի չունի և չի ասվում: Դատողություն այն մասին, թե լոգիկան պիտանի գիտություն է, իր հիմքն ունի մարդու մտավոր կյանքի զարգացման գործում զբա՞ կատարած դրական գերի մեջ: Հեղեն ասում է, այն պնդումը, թե հիմքը պետք է լինի բավարար, ավելորդ է, որովհետեւ դա ինքնին հասկանալի է: Այն, ինչի հիմքը բավարար չէ, հիմք չունի, քանի որ բոլորը պետք է որոշ հիմք ունենան*: Անկատած դա ճիշտ է, անհիմն ոչինչ չկա, բայց Հեղելի հարցադրման մեջ ինչ որ չափարավածություն կատ ինչն ամեն բան պետք է որոշ հիմք և ոչ թե ուղղակի հիմք ունենա: Այդ որոշ լրացումը հարցադրման մեջ անորոշություն է մտցնում ու նորից իրավունք է տալիս ասելու, թե հիմքը կարող է լինել սակայն անբավարար: Բայց այդ ինչպիսի հիմք է, որն անբավարար է, նման հիմք չկա:

1946թ. Փ. Փարիզի միջազգային կոնֆերանսին փրանս-իտալական սահմանների հարցը քննելիս Ավարալիայի ներկայացուցիչն առաջարկեց բնակավայրերի տեղերը որոշելու համար հասուլ կամքու ստեղծել պատճտարաներով, որ ինքը դրանց տեղը չղիտե: Կորելի՞ է արդյոք սա անբավարար հիմք ունեցող առաջարկություն համարել Եթե այս այդպիսում մենք պետքում մենք պետք է համաձայնվենք, որ տգիտությունը միջազգային հարցերի որոշման մեջ այնուամենայնիվ կարող է հիմք ծառայել այսինքն մենք պիտի արդարացնենք աղիտությունը: Սովետական Միության պատգամավոր ընկ. Վիշինսկին դրան պատասխանեց, որ տգիտությունը փաստարկում չէ, այլ կերպ ասած, որ ավարալիական ներկայացուցչի առաջարկը անհիմն է: Այս նշանակում է, եթե հիմքը իր հետեւնքը չի աղացուցում, հիմք չէ: Անբավարար հիմքը անբավարար է հենց այն բանի համար, որ հետեւնքի հիմանվորում չի տալիս: Մեկն ասում է, թե Դանիել Վարուժանը վատ պոետ է, որովհետեւ ես նրա գրածները չեմ հասկանում: Քառ գլուխական լոգիկայի դա անբավարար հիմք կառուցված դատողություն է: Բայց ինչ հիմք, թեկուզ անբավարար, կարող է համարվել մեկի ահասությունը որևէ բանապեղի ստեղծագործության դեղարվեստական արժեքը որոշելու

* Наука логики, II, էջ 17.

համար: Աւստի անբավարար հիմքը չկա, հիմքը պետք է անուայնաման բավարար լինի, հակառակ պարագային դա հիմք չէ: Ենազերն ասում է՝ «պատճառը, որը չի դործում, բոլորովին էլ պատճառ չէ»*: Անբավարար հիմքը հենց չփոքծող հիմք է, ուստի հիմք չէ:

Հիմքը պետք է ոչ միայն բավարար լինի, այլև իրական: Զեական հիմքը նույնպես հիմք է, բայց այն բանի հետեանքով, որ այս գելքում հիմքն ու հետեանքը միենայն բովանդակությունն ունեն, հիմնավորման ամբողջ զօրծողությունը վեր է ածվում մի տեսակ կրկնարանության: Հեզելն ասում է, երբ ընագեալ երկրի շարժումը բացարձում է արեի ձգողական ուժով, ապա նա կրկնարանությամք է զրադպւում, որովհետեւ արեվի ձգողական ուժը նույնպես շարժում է: Իրական հիմքը միենայն բովանդակության կրկնությունը չէ: Երբ ասում եմ, թե հասարակական հոգեբանությունը փոխելու համար մենք ստեղծեցինք սոցիալիստական արտազրանարարերություններ, սոցիալիստական պետություն ու կրթական նոր սիստեմ, ևս հիմքն ու հետեանքը վերցնում եմ որպես տարբեր բովանդակություններ, այսինքն ֆորմալ հիմքի վոխարեն կանդնում եմ սեալ հիմքի տեսակեալի վրա, որը զիտական մտածողության բռնած ուղին է:

Իրական հիմքը, շնորհիվ այն բանի, որ զա բովանդակությունը հիմնավորողի կրկնությունը չէ, բայց միաժամանակ կապկած ե դրա հետ, հանդիսանում է հենց զրա և ոչ թիմեկ ուժիչի հիմքը, դառնում է ավարտուն կամ բավարար հիմք, որը և դիտության օրենքներից մեկն է:

Ե Զ Ր Ա Կ Ա Յ Ո Ւ Թ Յ Ո Ւ Կ Ն

Լողիկայի օրենքները զիտական մտածողության օրենքներ են: Ինչպես ամեն մի գիտություն, այնպիս և սրանք նյութական աշխարհի ոլոր կարդի օրինաչափությունների անդրադարձում են մեր գիտակցության մեջ, ավելի պարզ՝ զրանք նյութի հարաբերականորեն կայուն վիճակների օրենքներ են, քանի

* Մարքս-Էնդելու, հատ. 14, էջ 331.

որ լոգիկան, էնդելսի խոռքերով առած, «կայուն մհծությունների» գիտություն է: Լոգիկայի և դիալեկտիկայի օրենքների միջև հակառակություն չկա և դրանց հարաբերությունը, նորից էնդելսի խոռքերով ասած, տարրական ու բարձրագույն մաթեմատիկաների հարաբերություն է: Լոգիկայի օրենքները այդ գիտության թեորեմիկական հիմունքներն են, դրանց վրա են կառուցվում հասկացությունները, դատողություններն ու մտահանգումները: Արոշ մտածողներ լոգիկայի օրենքները համեմատում են մաթեմատիկական աքսյոմաների հետ: Նման համեմատությունները ընդհանուր առմամբ արգելել հնարավոր չեն: Բայց չպետք է մոռանալ, որ մաթեմատիկական աքսյոմաները մեկը մյուսից անկախ ամբողջական ճշմարտություններ են, իսկ լոգիկայի օրենքներից յուրաքանչյուրը կապված է մյուսի հետ և այդ կապակցությունից կուրս կիսատ է, հարցի միայն մի կողմի լուծումը կամ լուսաբանումը: Լոգիկայի օրենքները իրարից անբաժան զիալեկտիկական ամբողջություն են, առանց որոնց զիտական մտածողությունը անհնար բան է:



Դի 01211

պատվեր № 39

տիրամ 1000

21/4 տպ. մամ.

Սառըագրված է տպագր. 1947 թ. մարտի 22-ին

Պետ. Հեռակա Մանկավարժական Խնտախոսութիւնը, Երևան, Տերյան 127

ՎՐԻՄԱԿՆԵՐ

ՀԸ	Տաղ	Տպագծ է	Պետք է լինի
24	3 դ.	Ժիշտ	Ժիշտ
26	15 դ.	Կրկնարանք	Կրկմանք
29	3 հ.	часто	частъ
31	12—15 դ.	հարաբերության	հարաբերություն

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0023097

ԳԻՒԾ Յ Ա.

ЦЕНА

11
5324

78

На правах рукописи

ГЕНРИ ГАБРИЭЛЬЯН
(Доктор философских наук)

ЗАКОНЫ ЛОГИЧЕСКОГО МЫШЛЕНИЯ

(На армянском языке)

Изд. Гос. Заочного Нед. Института Арм. ССР

Ереван—1947